

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 1

10.09.2020թ.

1. Առարկայական պարտքերի հանձնման բոլոր երեք հնարավորությունները սպառած ուսանողների առարկայական պարտքերի հանձնման թույլտվության հարցի վերաբերյալ.

1.1. ՀԱԱՀ ցերեկային ուսուցման համակարգում (բակալավրիատ, մագիստրատուրա) ուսանողների առարկայական պարտքերի (քննաշրջանին ընդհանրապես չմասնակցած, առարկայական պարտքերի հանձնման բոլոր երեք հնարավորությունները սպառած, վարձավճարի պարտքի պատճառով քննությանը չմասնակցած ուսանողների համար) վերահանձնման վերջնաժամկետ սահմանել ս.թ. սեպտեմբերի 30-ը: Քննաշրջանին մասնակցության պարտադիր պայման համարել ուսման վարձավճարի պարտքերի մարումը:

1.2. Հանձնարարել դեկաններին սեղմ ժամկետում ուսանողներին պատշաճ կերպով տեղեկացնել քննաշրջանի վերջնաժամկետի և վարձավճարների հավաքագրման վերաբերյալ:

2. 2018-2019 ուս. տարվա առարկաներից մինչև 12 ակադեմիական կրեդիտային պարտք ունեցող ուսանողների քննաշրջանի կազմակերպման հարցի վերաբերյալ.

2.1. Հանձնարարել ՌԻԳԿՎ պետ Դ. Հայրապետյանին՝ սեղմ ժամկետում կազմակերպել 2018-2019 ուս. տարվա առարկաներից մինչև 12 ակադեմիական կրեդիտային պարտք ունեցող ուսանողների դասընթացները Zoom հարթակում, կազմել գրաֆիկները՝ հնարավորություն ընձեռելով մասնակցելու քննաշրջանին մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը:

2.2. Դասընթացներին մասնակցած և ուսման վարձը վճարած ուսանողների քննաշրջանը կազմակերպել մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը՝ դեկանների և ամբիոնի վարիչների անմիջական հսկողությամբ:

2.3. Ուսման վարձը վճարած, սակայն դասընթացներին չմասնակցած (կամ մասնակցությունը 50%-ից ցածր է) ուսանողների համար կազմակերպել արագացված դասընթացներ Zoom հարթակում՝ ապահովելով դասաժամերի առնվազն 50%-ի լրացումը և թույլատրել մասնակցելու քննաշրջանին մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը՝ դեկանների և ամբիոնի վարիչների անմիջական հսկողությամբ:

2.4. Դասընթացներին մասնակցած, սակայն ուսման վարձը չվճարած ուսանողներին հնարավորություն տալ մասնակցելու քննաշրջանին մինչև ս.թ.

սեպտեմբերի 30-ը՝ ուսման վարձի պարտքի մարումից հետո՝ դեկանների և ամբիոնի վարիչների անմիջական հսկողությամբ:

2.5. Ուսման վարձը չվճարած և դասընթացներին չմասնակցած 4-րդ կուրսի ուսանողների համար (ԱՃ ֆակուլտետ՝ 2 ուսանող և ԱԲԱ ֆակուլտետ՝ 8 ուսանող) ուսման վարձի պարտքի մարումից հետո կազմակերպել արագացված, ինտենսիվ դասընթացներ Zoom հարթակում՝ ապահովելով դասաժամերի առնվազն 50%-ի լրացումը, և թույլատրել մասնակցելու քննաշրջանին մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը (դեկանների և ամբիոնի վարիչների անմիջական հսկողությամբ ու պատասխանատվությամբ): 1-3-րդ կուրսի առարկայական պարտքեր ունեցող ուսանողներին, ուսման վարձի պարտքի մարումից հետո, փոխադրել հաջորդ կուրս առարկայական պարտքերով՝ 2020-2021 ուս. տարում կազմակերպելով դասընթացներ:

3. Բանակից զորացրված, ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողների համար ընդհանրական մոդուլային առարկաների դասընթացների և քննությունների կազմակերպման հարցի վերաբերյալ.

3.1. Ուսումնառությունը դադարեցրած, հեռացված (ազատված) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից բուհ անցում կատարող ուսանողների համար մոդուլային առարկան համարել մեկ ամբողջություն և ուսումնասիրված, եթե ուսանողի նախկինում ուսումնասիրած առարկայի ժամաքանակն ու կրեդիտը կազմում են մոդուլի ամբողջական ժամաքանակի, կրեդիտի 2/3-ը, անկախ մոդուլի բաղադրիչ առարկաների ժամաքանակների հարաբերակցության:

3.2. Գործող ուսանողների համար կիրառել միջինացված գնահատականի սկզբունքը, այն է՝ մոդուլային ընդհանրական առարկայի գնահատականը կարող է ապահովել նվազագույն անցողիկ շեմ նույնիսկ այն դեպքում, եթե ուսանողը մոդուլի բաղադրիչ կազմող առանձին առարկաների մասով չունի դրական գնահատական: Այսինքն՝ ուսանողի մոդուլային ընդհանրական առարկայի ամփոփիչ քննությունը կարող ենք համարել հանձնած, եթե մոդուլի բաղադրիչ կազմող առանձին առարկաների ատեստավորումից ստացված միջին թվաքանականը 40 և ավելի է:

3.2.1 Եթե մոդուլի բաղադրիչ կազմող առանձին առարկաների ժամաքանակները հավասար են (օրինակ՝ մոդուլ X (96 ժամ), բաղադրիչ առարկաներ՝ առարկա 1 (24 ժամ), առարկա 2 (24 ժամ), առարկա 3 (24 ժամ), առարկա 4 (24 ժամ)), ապա մոդուլի ամփոփիչ գնահատականը պետք է հաշվարկել հետևյալ բանաձևով (կլորացումը կատարել ամբողջ թիվի ճշտությամբ).

Մոդուլի ամփ. գն.=առ. 1 ամփ. գն. + առ. 2 ամփ. գն. + առ. 3 ամփ. գն. + առ. 4 ամփ. գն.
առարկաների թիվ

Օրինակ՝ եթե ուսանողի առարկա 1-ի ամփոփ գնահատականը կազմել է 80 միավոր, առարկա 2-ինը՝ 80 միավոր, առարկա 3-ինը՝ 0 միավոր, առարկա 4-ինը՝ 0 միավոր, ապա ամփոփիչ գնահատականը կհաշվարկվի հետևյալ ձևով.

$$\text{Ամփ.գն.} = \frac{80+80+0+0}{4} = \frac{160}{4} = 40$$

3.2.2 Եթե մոդուլի բաղադրիչ կազմող առանձին առարկաների ժամաքանակները տարբեր են /օրինակ՝ մոդուլ Z /112 ժամ/, բաղադրիչ առարկաներ՝ առարկա 1 /32 ժամ/, առարկա 2 /64 ժամ/, առարկա 3 /16 ժամ//, ապա մոդուլի ամփոփիչ գնահատականը պետք է հաշվարկել հետևյալ բանաձևով (կլորացումը կատարել ամբողջ թիվի ճշտությամբ)։

$$\text{Մոդուլի ամփ. գն.} = \frac{\text{առ.1 ամփ. գն.} \times \text{առ.1 ժամ.} + \text{առ.2 ամփ. գն.} \times \text{առ.2 ժամ.} + \text{առ.3 ամփ. գն.} \times \text{առ. 3 ժամ.}}{\text{մոդուլի ընդհանուր ժամաքանակ}}$$

Օրինակ՝ եթե ուսանողի առարկա 1-ի ամփոփ գնահատականը կազմել է 70 միավոր, առարկա 2-ինը՝ 20 միավոր, առարկա 3-ինը՝ 50 միավոր, ապա կհաշվարկենք հետևյալ ձևով։

$$\text{Ամփ. գն.} = \frac{70 \times 32 + 20 \times 64 + 50 \times 16}{112} = \frac{4320}{112} = 38.5 \approx 39$$

4 Մագիստրատուրայում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար հավելավճարի սահմանման հարցի վերաբերյալ.

4.1. Մագիստրատուրայում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի լսարանային պարապմունքների համար սահմանել 1000 դրամ/ժամ հավելավճար:

4.2. Հանձնարարել իրավաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին սեղմ ժամկետում մշակել երեկոյան ժամերին մագիստրատուրայում դասավանդող աշխատակազմի հետ կնքվող համաձայնագրի օրինակը:

4.3. Հանձնարարել ամբիոնի վարիչներին՝ կորդինացնել երեկոյան ժամերին մագիստրատուրայի դասընթացների կազմակերպման աշխատանքները և մագիստրատուրայում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար սահմանել աշխատանքային ժամերի համապատասխան գրաֆիկ: Ցանկալի է մագիստրատուրայում դասավանդման գործընթացում ընդգրկել քոլեջի և բակալավրիատի դասընթացներով չձանրաբեռնված մասնագետներին:

4.4. Հանձնարարել գլխավոր հաշվապահ Ա. Հայրապետյանին և ամբիոնի վարիչներին՝ կատարողականի հիման վրա ապահովել մագիստրատուրայում դասավանդող աշխատակազմի վճարումները ամսական կտրվածքով:

4.5. Հանձնարարել ղեկաններին՝ երկօրյա ժամկետում մագիստրատուրայի ուսանողներին տեղեկացնել դասընթացների մեկնարկի, դասացուցակների և դասաժամերի վերաբերյալ:

5. Կամավորական հիմունքներով բանակ մեկնած ՀԱԱՀ ուսանողների (նաև անվճար ուսուցման համակարգի) զորացրումից և ուսանողնական իրավունքները

վերականգնելուց հետո ուս. պլանների փոփոխման հետևանքով առաջացած առարկայական կրեդիտային պարտքերի, 1 կրեդիտին համարաժեք գումարի գանձման, ինչպես նաև ուսուցման անվճար տեղը չպահպանելու խնդիրների վերաբերյալ.

5.1. Հանձնարարել ՈԻԳԿ վարչության պետ Դ. Հայրապետյանին, իրավաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին և ստորաբա-ժանումների ղեկավարներին՝ եռօրյա ժամկետում կազմել կամավո-րական հիմունքներով բանակ մեկնած, զորացրումից և ուսանողական իրավունքների վերականգնելուց հետո կրեդիտային պարտ-քեր, 1 կրեդիտին համարաժեք գումարի գանձման, ինչպես նաև ուսուցման անվճար տեղը չպահպանելու խնդիրներ ունեցող ուսանողների ցուցակները, լրացուցիչ քննարկել՝ ցուցաբերելով անհատական մոտեցում և ներկայացնել ռեկտորատի քննարկմանը:

5.2. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացում և ավտոմատացում» մասնագիտության 2017-2018 ուստարվա ուսումնառությունը դադարեցրած 3-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Հրաչիկ Ռազմիկի Ավետիսյանին համարել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերադարձած, վերականգնել 2019-2020 ուստարվա «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության «Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի վճարովի համակարգում՝ թույլատրելով հանձնելու առարկայական պարտքերն ու տարբերությունները:

6. ՈԻսման վարձավճարների զեղչերի համար ուսանողների կողմից դիմումների ներկայացման վերջնաժամկետի փոփոխման հարցի վերաբերյալ.

6.1. ՀԱԱՀ բակալավրիատի և մագիստրա-տուրայի (ցերեկային կամ հեռակա ուսուցման) ուսանողների կողմից ուսման վարձավճարների զեղչերի համար դիմումների ներկայաց-ման վերջնաժամկետ սահմանել ս.թ. հոկտեմբերի 10-ը:

6.2. Հանձնարարել դեկաններին, ՏՏ կենտրոնին՝ տեղեկատվական հնարավոր բոլոր միջոցներով իրազեկել ուսանողներին ուսման վարձավճարների զեղչերի համար դիմումների ներկայացման վերջնաժամկետի վերաբերյալ:

7. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ փոխադրման ցանկություն հայտնած ՀԱԱՀ այլ ֆակուլտետների 1-ին կուրսի ուսանողներից ստացված դիմումների վերաբերյալ.

7.1. Մերժել ԱՏ ֆակուլտետ տեղափոխման ցանկություն հայտնած ուսանողների դիմումները՝ 20-ից ավել առարկայական կրեդիտ տարբերության պատճառով: ՈԻսանողներին տեղեկացնել հեռակա ուսուցման դեպարտամենտի տնտեսագիտական համապատասխան մասնագիտություն տեղափոխման,

անհրաժեշտ կրեդիտների հավաքման, այնուհետև առկա ուսուցման համակարգի ԱՏ ֆակուլտետ տեղափոխման հնարավորության մասին:

7.2. Հանձնարարել դեկաններին բակալավրիատի ուսումնական պլանները վերանայել և ներկայացնել առաջարկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն 1-ին կուրսի ուսանողներին, մասնագիտական կողմնորոշման փոփոխության դեպքում, տեղափոխվել համապատասխան ֆակուլտետ կամ մասնագիտություն:

8. Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 1-ին կուրսի վճարովի համակարգ ընդունված ուսանողների հրամանագրման համար ուսման վարձավճարի վճարման նվազագույն շեմ և վերջնաժամկետ սահմանելու հարցի վերաբերյալ.

8.1. Հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սոցիալական ծանր իրավիճակը, քոլեջի վճարովի համա-կարգի 1-ին կուրսի ուսանողների հրամանագրման համար վճարման նվազագույն շեմ սահմանել տարեկան ուսման վարձավճարի 10%-ի չափով, իսկ վերջնաժամկետ սահմանել ս.թ. սեպտեմբերի 25-ը:

8.2. Ուսանողների և նանց ծնողների հետ իրականացնել բացատ-րական աշխատանքներ և ապահովել վարձավճարների ժամանակին հավաքագրումը:

8.3. Ուսման վարձի ամենամսյա վճարման դեպքում խստորեն հետևել վճարման ընթացքին, ուշացման դեպքում չթույլատրել մասնակցությունը դասերին, իսկ չվճարելու դեպքում հեռացնել քոլեջից:

8.4. Հանձնարարել իրավաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին՝ սեղմ ժամկետում վերանայել ուսման վարձավճարի ամսական վճարման վերաբերյալ ուսանողների հետ կնքվող պայմանագրերը:

9. Մասնագիտության համակարգողների հրամանագրման հարցի վերաբերյալ.

Հանձնարարել ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Ա. Տեր-Գրիգորյանին՝ 7-օրյա ժամկետում ՈւԳԿՎ ներկայացնել համակարգողների վերջին մեկ տարվա հաշվետվությունները, ուսումնասիրել դրանք և կայացնել համապատասխան որոշում. խրախուսել, կանոնակարգել և մշակել համակարգողների գործունեության ցուցիչներ, կամ անհրաժեշտության դեպքում, դադարեցնել գործունեությունը:

10. ՀԱԱՀ 90-ամյա հոբելյանական միջոցառումների շարքում ուսանողական գիտաժողովի կազմակերպման հարցի վերաբերյալ.

10.1. Հանձնարարել գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Ծպնեցյանին և ուս. խորհրդի նախագահ Կ. Ղարախանյանին՝ սեղմ ժամկետում կազմել ուսանողական գիտաժողովի նիստերի ժամանակացույց և օրակարգ, իսկ գիտաժողովի նստաշրջանից հետո հրատարակել լավագույն զեկուցումների էլեկտրոնային ժողովածու:

10.2. Հանձնարարել ուս. խորհրդի նախագահ Կ. Ղարախանյանին և ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ տեղեկատվական հնարավոր բոլոր

հարթակներով իրազեկել ՀԱԱՀ 90-ամյա հոբելյանական միջոցառումների շարքում կազմակերպվող ուսանողական գիտաժողովի վերաբերյալ:

11. Հեռակա ուսուցման մագիստրատուրայի վարձավճարների վերաբերյալ.

Հանձնարարել ՈԻԳԿ վարչության պետ Դ. Հայրապետյանին, գլխավոր հաշվապահ Ա. Հայրապետյանին, իրավաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին և դեկաններին՝ ևս մեկ անգամ քննարկել հեռակա ուսուցման մագիստրատուրայի վարձավճարների չափերը, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ ռեկտորատի հաստատմանը:

12. 2016թ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից (6 ուսանող) կամ մարտական հերթապահություն իրականացրած (1 ուսանող) ՀՈԻԴ ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի սահմանման հարցի վերաբերյալ.

12.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի 2016թ. քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից 2019-2020 ուստարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 50%-ի չափով.

Յ/հ	<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>Մասնագիտ., կուրս</i>	<i>Տարեկ. ուսման վարձ (դրամ)</i>	<i>Չեղչի չափը (դրամ)</i>
1	Ջուլիակյան Անդրանիկ Արթուրի	Գինու. տեխն. – 5	220000	110000
2	Նահապետյան Թաթուլ Նորայրի	Գյուղ. մեք. – 4	330000	165000
3	Հախնազարյան Սայադ Անդրանիկի	Ֆինանս. – 4	440000	220000
4	Ղադիմյան Գևորգ Սամվելի	Ֆին. կառ. - 5	300000	150000
5	Սարգսյան Տիգրան Արթուրի	Հաշվ. հաշվ. – 5	400000	200000
6	Վահանյան Ղանիել Անդրանիկի	Հողաբարել. – 2	330000	165000

12.2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի «Մսի և մսամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության 2019-2020 ուստարվա երրորդ կուրսի ուսանող **Հայկ Գազիկի Կարապետյանի ուսման վարձը զեղչել 30% չափով** զինվորական ծառայության ընթացքում քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացնելու համար:

13. 2019-2020 ուս տարվա առաջին կանչին պարտաճանաչ մասնակցած ուսանողների՝ երկրորդ կանչի հեռավար ուսուցման մի քանի դասընթացներին 30%ից ավելի բացակայությունների, դրանց լրացումների և վճարման խնդիրների վերաբերյալ.

Հանձնարարել հեռակա ուսուցման դեպարտամենտի պետ Հ. Հա-րությունյանին ուսումնական գործընթացի կառավարման վարչությանը ներկայացնել 2019-2020 ուս

տարվա երկրորդ կանչի դասընթացներին տեխնիկական մի շարք պատճառներով 30%-ից ավելի բացակայություններ ունեցող ուսանողների ցուցակները, քննարկել՝ ցուցաբերելով անհատական մոտեցում և կայացնել համապատասխան որոշում:

14. 2018-2019 ուս. տարվա ընթացքում համալսարանից հեռացված ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման և հրամանագրման ժամկետների սահմանման հարցի վերաբերյալ.

14.1. Հանձնարարել ՈԻԳԿ վարչության պետ Դ. Հանյապետյանին, իրաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին, գլխավոր հաշվապահ Ա. Հայրապետյանին, ՀՈԻԴ պետ Հ. Հարությունյանին, լրացուցիչ քննարկել հարցը, պարզաբանում ստանալու նպատակով դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, այնուհետև կայացնել համապատասխան որոշում:

14.2. Հրամանագրումից առաջ նման ուսանողներից գանձել նախորդ տարիների ընթացքում մատուցված ծառայությունների համար նախատեսված գումարը:

15. 2019-2020 ուս. տարվա երկրորդ կիսամյակի տեղեկագրերի ամփոփման և քննաշրջանի արդյունքներով e-Buh համակարգով ռոտացիայի իրականացման հնարավորության հարցի վերաբերյալ.

15.1. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին սեղմ ժամկետում կազմակերպել տեղեկագրերի ստորագրման աշխատանքները և իրականացնել ռոտացիան:

15.2. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին սեղմ ժամկետում բացահայտել և կարգավորել e-Buh համակարգով ռոտացիայի իրականացմանը խոչընդոտող խնդիրները:

16. Ըստ կրթական մակարդակների, մասնագիտությունների և կուրսերի բակալավրային (առկա և հեռակա ուսուցման, այդ թվում՝ Վանաձորի և Միսիանի մասնաճյուղերի), մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերի 2020-2021 ուս. տարվա մեկ կրեդիտին համապատասխանող ուսման վարձավճարի չափը հաստատելու վերաբերյալ.

Հաստատել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2020-2021 ուս. տարվա մեկ կրեդիտին համապատասխանող ուսման վարձավճարի չափը՝ ըստ կրթական մակարդակների, մասնագիտությունների և կուրսերի (հիմք՝ 2020-2021 ուստարվա համար սահմանված վարձավճարների հրամանը. N 84/ԱՕ առ 29.07.2020թ.):

17. ՀԱԱՀ ռեկտորատի 2020-2021թթ ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ ռեկտորատի 2020-2021թթ ուսումնական տարվա աշխատանքային պլանը:

18. ՀԱԱՀ ուսանողական հանրակացարակում ուսանողների կեցության ամսական վարձի փոփոխության հարցի վերբերյալ.

2020թ. սեպտեմբերի 15-ից ՀԱԱՀ ուսանողական հանրակացարանի ամսվա վարձավճարը սահմանել 7000 դրամ ՀԱԱՀ ուսանողների համար, իսկ այլ ԲՈՒՀ-երի ուսանողների համար՝ 18000 դրամ:

19. Համալսարանում ուսանողների գիտելիքի գնահատման համակարգի փոփոխության հարցի վերբերյալ.

Հանձնարարել ՈԳԱ կետրոնին, ՈՒԳԿ վարչությանը, ստորաբաժանումների ղեկավարներին, քննարկել և 10-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ համալսարանում ուսանողների գիտելիքի գնահատման 100 բալային համակարգին անցման, ինչպես նաև առարկաների ատեստավորման ժամանակ (քննություն, ստուգարք) անցողիկ շեմի բարձրացման վերաբերյալ:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ